ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« --- » մարտի 2015**թ.** **N__-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ «ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Նոր Նորքի 1-ին զանգվածում՝ Գայի պողոտայի և Լվովյան փողոցի հատման տարածքին հարակից նորակառույց զբոսայգին անվանակոչել Արցախյան պատերազմի մասնակից, ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի անվամբ՝ «Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգի»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ «ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թաթուլ Կրպեյանը ծնվել է 1965թ. ապրիլի 21-ին Թալինի շրջանի Արեգ գյուղում (2009թ.-ին վերանվանվել է Թաթուլ) ։

1972-1982թթ. սովորել է տեղի (1991թ. անվանակոչվել է Թաթուլ Կրպեյանի անվան) միջնակարգ դպրոցում:

1982-1983թթ. սովորել է Թալինի տեխնիկական թիվ 29 ուսումնարանում:

1983թ. զորակոչվել է խորհրդային բանակ, սակայն 1985թ. սրտի ծանր վիրահատությունից հետո զորացրվել է՝ ստանալով զինծառայության 2-րդ խմբի հաշմանդամության կարգ։

1986թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի նախապատրաստական բաժին, այնուհետև՝ պատմության ֆակուլտետ:

1988թ. անդամակցել է «Միացում» կազմակերպությանը՝ դառնալով Արցախյան շարժման ակտիվ մասնակից:

1990թ. Թաթուլ Կրպեյանը մեկնում է Գետաշեն՝ որպես պատմության ուսուցչի, իրականում՝ Գետաշենի ինքնապաշտպանության ղեկավար: 1991թ. ապրիլի 30-ին Գետաշենում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ուժերի աջակցությամբ, ադրբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատների (ՕՄՕՆ) կողմից իրագործվող՝ Արցախը հայաթափելու «Օղակ» գործողությունը կանխելիս մարտական ընկերների հետ զոհվել է:

Թաթուլ Կրպեյանի աճյունն ամփոփված է հայրենի Թաթուլ գյուղում, որտեղ կառուցված է նրանց հիշատակը հավերժացնող հուշահամալիր։

1992թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի լսարաններից մեկն անվանակոչվել է Թաթուլ Կրպեյանի անվամբ, որը վերանորոգումից և կահավորումից հետո վերաբացվել է 2007թ.։

ՀՀ Նախագահի 1996թ. սեպտեմբերի 20-ի հրամանագրով ՀՀ պաշտպանության գործում մատուցած համազգային նշանակության բացառիկ ծառայությունների համար երկրապահ ջոկատի հրամանատար Թաթուլ Կրպեյանին հետմահու շնորհվել է «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում՝ հանձնելով «Հայրենիք» շքանշան: ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ՝ 2000թ. սեպտեմբերի 1-ից ԵՊՀ-ում սահմանվել է Թաթուլ Կրպեյանի անվան ուսանողական կրթաթոշակ։

ՀՀ Թալին քաղաքում Թաթուլ Կրպեյանի անվամբ անվանակոչված է փողոց, ինչպես նաև նրա անունն է կրում ԼՂՀ Կովսական քաղաքի դպրոցը։

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հաստատված կարգի (այսուհետև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման մասին որոշումները, սույն բաժնի կանոններին համապատասխան, ընդունում են համայնքների ավագանիները: Կարգի 5-րդ կետի համաձայն՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Երևան քաղաքի Նոր Նորքի 1-ին զանգվածում՝ Գայի պողոտայի և Լվովյան փողոցի հատման տարածքին հարակից նորակառույց զբոսայգին Թաթուլ Կրպեյանի անվամբ՝ «Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգի» անվանակոչելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա ընտանիքի կողմից։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ «ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում «Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգի» անվանակոչելու մասին»» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ «ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում «Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգի» անվանակոչելու մասին»» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ